



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 11 - Ա
03 փետրվարի 2015 թ.

**ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՈՂ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆԸ»
ԽՈՐԱԳՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ «ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԶՄԵՌ - 2015»
ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.19-րդ կետերի պահանջներով

որոշում եմ՝

1. Հաստատել՝
- 2) Առողջ ապրելակերպի շրջանակներում «Ոչ թմրամոլությանը» խորագրով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում «Գեղարքունյաց ձմեռ - 2015» մարզամշակութային միջոցառման կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի.
- 3) Առողջ ապրելակերպի շրջանակներում «Ոչ թմրամոլությանը» խորագրով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում անցկացվող «Գեղարքունյաց ձմեռ -2015 >> մարզամշակութային միջոցառման կանոնակարգը՝ համաձայն N2 հավելվածի:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին
3. Սույն որոշման հիման վրա մեջ է մտնում ստորագրման պահից:



Ռ. Գրիգորյան

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կազմ

**Առողջ ապրելակերպի շրջանակներում «Ոչ թմրամոլությունը» խորագրով
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում
«Գեղարքունյաց ձմեռ – 2015» մարզամշակութային միջոցառման
կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի**

- Բաղայան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/
- Ասատրյան Ի. - մարզպետարանի աշխատակազմի տեղակա ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
- Շահբազյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ
- Պողոսյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ
- Չարվադարյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ
- Շառոյան Վ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ
- Թիգլյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ
- Օհանյան Տ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ
- Զազյան Կ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ
- Առաքելյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ
- Գևորգյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի կրտսեր մասնագետ
- Մալխասյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի կրտսեր մասնագետ
- Խլղայան Խ. - «Գեղամա աշխարհ» թերթի գլխավոր խմբագիր /համաձայնությամբ/



Ա. ԽԼՂԱԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՌՈՂՋ ԱՊՐԵՆԱԿԵՐՊԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ <<ՈՋ ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆԸ>>
ԽՈՐԱԳՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ << ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ՁՄԵՌ - 2015 >>
ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նպաստել՝

- ✓ ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքներում ձմեռային մարզաձևերի և ազգային խաղերի մասսայականացմանը
- ✓ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, մարզական կազմակերպությունների կողմից ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ուղղությամբ իրականացվող համագործակցված աշխատանքներին
- ✓ մարզի ազգաբնակչության առօրյայում առողջ ապրելակերպի արմատավորմանը
- ✓ հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակության գործընթացին

2. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

<<Գեղարքունյաց ձմեռ -2015>> մարզամշակութային միջոցառումն անցկացվում է մարզի համայնքներում՝ 2015 թվականի փետրվարի 7-23-ն ընկած ժամանակահատվածում:

3. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

- ✓ Մասսայական դահուկավազք, բարձունքի գրավում
- ✓ Մրցումներ՝ սահնակներով
- ✓ Պարանի ձգում /թիմերով/
- ✓ 8 կգ և 16 կգ կշռաքարերի բարձրացում /ազատ ոճով /
- ✓ Մարզական ցուցադրական ելույթներ,
- ✓ Սպորտային տարաբնույթ խաղեր
- ✓ Գեղարվեստական ինքնագործ համույթների ելույթներ

- ✓ Սպորտլանդիայի անցկացում
- ✓ Մրցումներ՝ ազգային խաղաձևերից
- ✓ Ազգային «< կոխ>> ըմբշամարտի անցկացում երեք քառային կարգերում / մինչև 40 կգ., 41 կգ-ից –մինչև 50 կգ. և 51կգ-ից- մինչև 60 կգ ./
- ✓ Մինի ֆուտբոլի անցկացում /թիմի կազմը՝ 8 մարզիկ /
- ✓ Շուրջպար՝ խարույկի շուրջ

4. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Միջոցառման ընդհանուր ղեկավարումը իրականացնում է Հաստատանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը, իսկ համայնքներում՝ տվյալ համայնքի ղեկավարի աշխատակազմը՝ ուսումնական և մարզամշակութային հաստատությունների, հասարակական կազմակերպությունների աջակցությամբ:

5. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ

Միջոցառումը կլուսաբանվի մարզում գործող զանգվածային լրատվական միջոցներով և կտեղադրվի մարզպետարանի կայքէջում: Միջոցառման ավարտից հետո անհրաժեշտ է մինչև ս/թ փետրվարի 25-ը «< Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն ներկայացնել միջոցառման վերաբերյալ տեղեկատվություն և տեսանյութեր:

6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

«<Գեղարքունյաց ձմեռ-2015 >> մարզամշակութային միջոցառման կազմակերպման և անցկացման հետ կապված ծախսերը հոգում են համայնքները:

7. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

«<Գեղարքունյաց ձմեռ-2015>> մարզամշակութային միջոցառման ընթացքում առանձին մարզաձևերից մրցանակային տեղեր գրաված թիմերին և մարզիկներին պատվոգրերով պարգևատրումը կամ հուշանվերներով խրախուսումն իրականացվում է համայնքի ղեկավարի կողմից:



(Handwritten signature)

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ